ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 485 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 111-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունվարի 27-ի «Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ ձևավորելու, խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի փետրվարի 12-ի N 181-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 111-Ա որոշման՝

1) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Խորհրդին՝

1) մինչև 2026 թվականի հունիսի 30-ը հաստատել հանձնաժողովի կողմից մշակված նոր Սահմանադրության հայեցակարգի նախագիծը և ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ.

2) մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատել հանձնաժողովի կողմից մշակված նոր Սահմանադրության նախագիծը և ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:».

2) N 2 հավելվածի՝

ա. ամբողջ տեքստում «Սահմանադրության փոփոխությունների» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «նոր Սահմանադրության» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով, իսկ «սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը՝ «նոր Սահմանադրության հայեցակարգ» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

բ. 37-րդ կետի 3-րդ ենթակետում «սահմանադրական բարեփոխումների նախագծի» բառերը փոխարինել «նոր Սահմանադրության հայեցակարգի նախագծի» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ